3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշման օրինակը սահմանված ժամկետում հանձնել Սամվել Առաքելյանին:

Քաջարան համայնքի ղեկավար Մ. Փարամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2019թվականի N 92 -Ա

## << ԶՊՄԿ>> ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ Ք. ՔԱՋԱՐԱՆ ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ 18/16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ 1.85052 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի ) բացակայության դեպքում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգը հաստատելու մասին,, 2015թ հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով իրավասու մարմնի՝ Սյունիքի մարզպետարանի 14.02.2019 N 01/00702-2019 համաձայնությունը՝ *որոշում եմ*

1.Փոփոխել ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի քաղաք Քաջարան Լեռնագործներ փողոցի թիվ 18/16 հասցեում գտնվող <<ԶՊՄԿ>> ՓԲԸ–ին սեփականության իրավունքով պատկանող /վկ. 2322545/ տրանսպորտային հանքուղու շենք, շինությունների սպասարկման արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասից 1.85052հա <<գյուղատնտեսական արտադրական>> գործառնական նշանակությունը <<արդյունաբերական օբյեկտների>> գործառնական նշանակության:

2.Համապատասխան փոփոխությունը ներառել համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ փետրվարի 22
ք.Քաջարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajaran.syunik@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2019թվականի N 93- Ա

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՄԻԿԻ ԱԹԱՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ՔԱՋԱՐԱՆ ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ 7,8 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ, 24-րդ մասերով և 42-րդ հոդվածի 10-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ք.Քաջարան Լեռնագործների փողոցի թիվ 9 շենքի 7,8 բնակարանի բնակիչ Հարություն Ռոմիկի Աթայանի դիմումը.
*որոշում եմ.*_

1. Հարություն Ռոմիկի Աթայանին սեփականության իրավունքով պատկանող (սեփ. վկայական N18022019-09-0036) ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի Լեռնագործների փողոցի թիվ 9 շենքի 7,8 բնակարանի մասնատման արդյունքում առաջացած բնակարաններին տալ հասցեներ՝

1.1. 35,90/երեսունհինգ ամբողջ իննսուն/ք.մ բնակարանին ՀՀ Սյունիքի մարզ Քաջարան համայնք ք.Քաջարան Լեռնագործների փողոց 9 շենք բնակարան 31 :

1.2. 78,35/յոթանասունութ ամբողջ երեսունհինգ/ք.մ. բնակարանին ՀՀ Սյունիքի մարզ Քաջարան համայնք ք.Քաջարան Լեռնագործների փողոց 9 շենք բնակարան 32:

2.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի 11 հուլիսի 2017 թվականի <<Քաջարան քաղաքի Լեռնագործների փողոցի թիվ 9 շենքում սեփականության իրավունքով Հարություն Աթայանին պատկանող բնակարանի մասնատման արդյունքում առաջացած բնակարաններին հասցե տալու մասին >> N157-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

2019թ. փետրվարի 22
ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2019թվականի N 94 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 17 ՇԵՆՔԻ ՄԵՐՁԱԿԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 17,4 Ք.Մ. ԱՐՏԱՔԻՆ /16,56 Ք.Մ. ՆԵՐՔԻՆ/ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՈՐՈՇՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ մասերով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ. <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամաբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին >> թիվ 731-Ն, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշման՝ *որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնագործների փողոցի թիվ 17 շենքի մերձակա տարածքում 0,00174հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի վրա՝ ինքնակամ կառուցված 17,4ք.մ արտաքին /16,56 ք.մ ներքին/ մակերեսով ավտոտնակը, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական և գրանցել որպես համայնքային սեփականություն:
2.Վերը նշված ավտոտնակին և սպասարկման հողատարածքին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, ք. Քաջարան Լեռնագործների փողոց թիվ 17/8:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ փետրվարի 22
ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2019թվականի N 95 -Ա

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԲԱԲԻԿԱՎԱՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ՍԱՄՎԵԼ ԽՈՒՄԱՇԱՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,2294 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԼՈՂԱՎԱԶԱՆԸ , ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16 կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3 կետով,Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով,համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ. <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն , 2003թվականի ապրիլի 17-ի <<Բազմաբնակարան բնակելի շենքերի , բնակարանների , անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին>> թիվ 470-Ն որոշումների և հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ք.Քաջարան Խանջյան փողոցի թիվ 8 շենքի 33 բնակարանի բնակիչ Սամվել Խումաշարի Առաքելյանի դիմումը՝ *որոշում եմ*

1.Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 11092018-09-0032 վկայականի համաձայն ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի գյուղ Բաբիկավան 3-րդ փողոց տուն 5 հասցեում Սամվել Խումաշարի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0,2294հա հողամասում ինքնակամ կառուցված 41.4ք.մ. արտաքին / 36.4ք.մ. ներքին/մակերեսով լողավազանը , 31.62ք.մ. արտաքին /27.2ք.մ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 65.0ք.մ. արտաքին /52.3ք.մ. ներքին/ մակերեսով կիսակառույց շինությունը և 95.75ք.մ. մակերեսով պարիսպը , որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական և գրանցել որպես Սամվել Խումաշարի Առաքելյանի սեփականություն:

1.1.Նշված շինությունները, որպես սեփականություն ձեռք բերելու համար շինարարություն իրականացրած անձ Սամվել Խումաշարի Առաքելյանին առաջարկել վճարելու համայնքային բյուջե օտարման համար սահմանված հետևյալ վճարը՝ 41.4x0,035x6000=8694(ութ հազար վեց հարյուր իննսունչորս ) ՀՀ դրամ լողավազանի համար, 31.62x0,035x6000=6641(վեց հազար վեց հարյուր քառասուն մեկ ) ՀՀ դրամ ավտոտնակի համար, 65.0x0,035x6000=13650(տասներեք հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ կիսակառույց շինության համար և 95.75x0,035x6000=20108(քսան հազար մեկ հարյուր ութ ) ՀՀ դրամ պարսպի համար:

2. Օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ փետրվարի 22
ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81,
Ֆաքս 0285-3-30-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«22» փետրվարի 2019 թ. N 96-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Որոշման կարգավորման առարկան*

13/12/2018թ ՀՀ Սյունիքի մարզային քննչական վարչությունում քրեական գործով թիվ 57/36740/8 Քաջարանի համայնքապետարանին ուղղված գրությամբ պարզվել է, որ Ջագիկավան թաղամասում, Բաղիջուր գետի մոտ առկա է ինքնակամ կառուցված լողավազաններ. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Քաջարան համայքնի հերթապահ էլեկտրոնային քարտեզի վրա Ջագիկավան թաղամասում երկաթբետոնյա ջրավազան առկա չէ: 2014թ Բարխուդար Վարդանյանն իր միջոցներով սկսել է կատարել երկաթ-բետոնյա ավազանների բարեկարգման աշխատանքներ, և այդտեղ սկսել աճեցնել իր ընտանիքի կարիքների համար <<Իշխան>> և <<Կարմրախայտ>>տեսակի ձկներ: Նույնանման փաստեր է շարադրվել նաև հաջորդ պարբերությամբ՝ մասնավորապես, որ առկա է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48 հոդված, հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերը փոփոխելու ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54 հոդված, հողօգտագործման իրավունք չունեցող անձանց պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողմաերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների առերևույթ առկայություն:

**Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքները**

Համաձայն Քաջարանի համայնքապետարանի քաղաքաշինության, հողի վերահսկողության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և [illegible]ների բաժնի կողմից արձանագրվել է, որ Քաջարան համայնքի Ջագիկավանի [illegible] Բաղացջուր գետի ղեռևս խորհրդային տարիներին կառուցված երկաթբետոնյա

լողավազաններն ապօրինի զավթել է Բարխուդար Վարդանյանը, այնուհետև տարածքը ցանկապատել է և չի վերացրել դրա հետևանքները, որի համար կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն/թիվ /, որը ստորագրվել է Բարխուդար Վարդանյանի կողմից:

22/01/2019, թիվ 57-126-19 գրությամբ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի վարչությունը, Քաջարանի համայնքապետարանի կողմից ձեռնարկված անհրաժեշտ փաստաթղթակազմության ձեռք բերման համար , հայտնել է, որ 2018թ նոյեմբերի 26-ին որոշում է կայացվել Բարխուդար Վարդանյանի վերաբերյալ իրենց մոտ քննվող թիվ 41102918 քրեական գործով վարույթը կարճելու մասին, միաժամանակ ներկայացվել են նաև քրեական գործով նյութերի պատճենները:

Համաձայն Վարչական իրավախախտման վերաբերյալ ծանուցագրի /1-19/ Բարխուդար Վարդանյանը ծանուցվել է <<Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 34 հոդվածի հիմքով հարուցված վարչական վարույթի և դրա վերաբերյալ 05/02/2019թ, ժամը 11:00-ին անկացվելիք լսումներին մասին:

05/02/2019թ վարչական վարույթի լսումներին վերջինս չի ներկայացել:

*Վարչական ակտ ընդունելու իրավական հիմնավորումները.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Վարչական իրավախախտման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, ..., սույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Վերոնշյալից ակնհայտ է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու գործի վարույթը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առանձին տեսակի վարչական վարույթ է, որը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին քննության վարույթը կարգավորող նորմերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարածքային կառավարման մարմինները քննում են նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց լիազորության շրջանակներում՝ /.../ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներն են հանդիսանում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով

մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի օրենքով ձեռք բերված ապացույցները՝ ղեկավարվելով օրենքով (տե՛ս, Սուրեն Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը)

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, ...,

քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Նշվածից ակնհայտ է, որպեսզի անձը ենթարկվի վարչական պատասխանատվության, նրա արարքը պետք է ուղղվի որպես պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված՝ որում առկա են օրենսդրությամբ նախատեսված կոնկրետ զանցակազմի բոլոր հատկանիշները:

Համաձայն ՀՀ Քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության 26/11/2018թ թիվ 41102918 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ որոշվել է  սույն քրեական գործի վարույթը կարճել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության հիմքով, որը չի բողոքարկվել սահմանված ժամկետում: Սակայն նույն քրեական գործով ձեռք բերված ապացույցների ուժով ՀՀ Քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունից 13/12/2018թ Քաջարանի համայնքապետարանին ուղղված գրության մեջ արձանագրվել են ենթադրյալ վարչական իրավախախտումներ, որոնք հնարավոր է կատարված լինեն զանցառու Բարխուդար Վարդանյանի կողմից:

Համաձայն նույն գործով ՝ 07/112018թ Քաջարան համայնքի Լեռնաձորի վարչական ղեկավար Ստեփան Բենիկի Պետրոսյանի բացատրության՝ Ձագիկավան 1990-ական թվականներին Ձագեձոր գյուղի տարածքում ինչ-որ սեփականատիրոջ կողմից, նախկին գործկոմի որոշմամբ տրված տան սեփականատիրոջ կողմից կառուցվել են երկաթբետոնյա ավազաններ, մի պահ այդ հատվածում ձուկ է բազմացրել, ավազանները ծառայել է որպես անասունների լողացման վայր: Տարիներ հետո վերանորոգումից հետո, ցակապատվել է ՀԷԿ-ի անվտանգությունից ելնելով:

Համաձայն 04/08/2019թ Ստեփան Պետրոսյանի միջնորդագրի, պարզվել է, որ 2014-2017թ, Ձագիկավան համայնքում գտնվող լողավազանների հողամասի զավթման մասով ՀՀ վարչական իրավախախտման վերաբերյալ 48 հոդվածի հատկանիշներով որպես նախկին համյանքի ղեկավարի, երևէ զանցառու Բարխուդար Վարդանյանի վերաբերյալ վարչական վարույթ չի հարուցվել:

Համաձայն 21/09/2018թ ՀՀ Քննչական կոմիտեում որպես վկա հարցաքննված զանցառու Բարխուդար Վարդանյանի արձանագրության, պարզվել է, որ 2014թ Ձագիկավան մերձավոր ազգականներին այցելության ժամանակ տեսել է Բաղաջջուր գետի ափին, գյուղից վերև կային կառուցված ավազանման կառույցներ, որոնց գտնվել է անտիրաթար, անտիրան, վիճակում, ջուրը իր

միջոցներով կատարել է վերանորոգման աշխատանքներ, որն ավարտելուց հետո իր ընտանիքի կարիքների համար սիրողական ձուկ էր բուծում, միաժամանակ նշել է, որ ցանկապատված եղել է հիշյալ տարածքը:

Փաստորեն հիշյալ ապացույցների բեռի տակ և համադրելով իրավական հիմնավորումների հետ, ակնհայտ է, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154 հոդվածի 1-ին մասով, նախատեսված դիսպոզիցայի շրջանակում՝ / Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան, /չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության, քանի որ քրեական գործի շրջանակում արդեն իսկ վկաներ Ս Պետրոսյանի, Անդրեասյանի, Բաբուեյանի ցուցմունքներով հաստատված է այն փաստը, որը այդ ավազանանման կառույցները կառուցված են եղել դեռևս 1990-ական թվականներից անհայտ անձի կողմից, փաստորեն վարչական վարույթի այս մասով չի կարող դիտվել Բարխուդար Վարդանյանը, քանի որ որպես ինքնակամ կառույց դա արդեն իսկ կառուցված է եղել: Նույնանման փաստական հանգամանքների լույսի ներքո նույնպես հակադարձվում է ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ 54 հոդվածի նորմի պահանջները, քանի որ Բարխուդար Վարդանյանի կողմից հողամասը ոչ նպատակային նշանակության օգտագործում չի կարող դիտարկվել, քանի որ չկան բավարար ապացույցներ, որ կհիմնավորորեր հիշյալ իրավախախտումը:

Վարչական իրավախախտման յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է իր կոնկրետ զանցակազմը, իսկ վարչական զանցակազմը կարող է դրսևորվել միայն զանցակազմի բաղկացուցիչ մասերի՝ վարչական զանցանքի օբյեկտի, վարչական զանցանքի օբյեկտիվ կողմի, վարչական զանցանքի սուբյեկտի և վարչական զանցակազմի սուբյեկտի կողմի միաժամանակյա առկայության դեպքում, իսկ նշված տարրերից որևէ մեկի բացակայության դեպքում բացակայում է վարչական զանցակազմը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վերոնշյալից ակնհայտ է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման առկայության համար անհրաժեշտ է սուբյեկտի կողմից պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու փաստի առկայությունը: Վիճելի պարագայում

Բարխուդար Վարդանյանի բացատրությունը այն մասին, որ հողազավթումը իր կողմից չի իրականացվել, ցանկապատը նույնպես ինքը չի տեղադրել չի կարող դիտվել արժանահավատ, քանի որ նույն նախաքննության մարմնի կայացրած որոշման մեջ ամրագրված է և չվիճարկվող փաստ է, որ խորհրդային տարիներին կառուցված ավազանանման վիճելի կառույցները ծառայեցվում էր մինչև Բարխուդար Վարդանյանի օգտագործումը որպես անասուններ լողացնելու վայր, իսկ դա ենթադրում է, որ ցանկապատված տարածքը չի կարող անասունների համար անարգել մուտք գործելու վայր հանդիսանա, հետևաբար Բարխուդար Վարդանյանը եթե հիշյալ լողավազանները բարեկարգել և դարձրել է պիտանի ձկնաբուծության համար, ապա այն չի կարող բաց տարածության մեջ գտնվել, հետևաբար կիրարկվում է ՀՀ Վարչական իրավախախտման 48 հոդվածի 1-ին մասի նորմի պահանջները: Անդրադառնալով նորմի՝ օրենսդրի իմպերատիվ պահանջին՝ համակարգված դիտարկմանը

1/տեղի է ունեցել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի զավթում՝ պետությանը կամ համայնքին պատկանող հողամասը որևէ անձի կողմից առանձնացվել է և գտնվում է նրա տիրապետության ներքո

2/հողամասի զավթումն ինքնակամ է՝ առկա չէ դրա տիրապետման օրինական հիմք

3/պատասխանատվության ենթարկելու պահի դրությամբ ինքնակամ զավթում իրականացրած անձը չի վերացրել դրա հետևանքները

4/ինքնակամ զավթումն իրականացրել է և դրա հետևանքները չի վերացրել միևնույն սուբյեկտը

5/վերոնշյալ արարքները կատարելիս անձը գործել է մեղավորությամբ:

Սույն գործի լուծման համար էական նշանակություն համարվող հանգամանքները բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրությունից հետո, անվիճելի է թույլ տրված իրավախախտման մեջ Բարխուդար Վարդանյանի մեղավոր լինելու հանգամանքը, ուստի վերջինիս պետք ենթարկել պատասխանատվության նախատեսված ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48հոդվածի 1-ին մասով:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ‹‹Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին›› ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարչական վարույթի մասնակից **Բարխուդար Վարդանյանին** վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտման համար ենթարկել վարչական

պատասխանատվության, կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք՝ 100.000 ( մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Բարխուդար Վարդանյանի կողմից տուգանքը պետք է վճարվի Քաջարանի համայնքապետարանի 900315202151 հաշվեհամարին սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով, անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում
4.Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշման օրինակը սահմանված ժամկետում հանձնել Բարխուդար Վարդանյանին:

Քաջարանի համայնքի

Ղեկավար [signature] Մ.Փարամազյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 97-Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ԲԱՐԻԿԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԲՆԱԿԻՉ ՍՈԿՐԱՏ ԲԱԽՇԻԻ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սոկրատ Բախշիի Առուստամյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Սոկրատ Բախշիի Առուստամյանին՝ /անձն.՝ AM 0922724, տրված՝ 31.10.2012թ., 061 կողմից/, որպես դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Փետրվարի 25
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԻ ՆԻԿՈՂԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 98 -Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԲԻԿ ՍԻՄՈՆԻ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին " ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ռուբիկ Սիմոնի Լևոնյանի դիմումը`

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Ռուբիկ Սիմոնի Լևոնյանին` /անձն.` AM 0645446, տրված` 22.02.2012թ., 061 կողմից/, որպես դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Փետրվարի 25
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ` ԱՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 99 -Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՅԻԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սվետլանա Սայիի Սարգսյանի դիմումը`

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Սվետլանա Սայիի Սարգսյանին` /անձն.` AN 0444019, տրված` 16.04.2013թ., 061 կողմից/, որպես դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Փետրվարի 25
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ` ԱՆԻ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 101-Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՅԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին " ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Արայիկ Արմենակի Կարապետյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Արայիկ Արմենակի Կարապետյանին՝ /նույն. քարտ՝ 003048816, տրված՝ 05.02.2014թ., 041 կողմից/, որպես դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Փետրվարի 25
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԻ ՆԻԿՈՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 100 -Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՆԻԿ ԱՐԳՈՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սոնիկ Արգոնի Համբարձումյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Սոնիկ Արգոնի Համբարձումյանին՝ /անձն.՝ AM 0502673, տրված՝ 04.11.2011թ., 061 կողմից/, որպես դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Փետրվարի 25
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԻ ՆԻԿՈԼԱՅԱՆ